

ՀՏԴ 821.133.1-93 Գալան

ԳՄԴ 84(4Ֆր)

Գ 163

Նկարիչ՝

*Քարոլին Ռոստամի*

Գալան Անտուան

Գ 163 Ալադինի պատմությունը կամ կախարդական լամպր/Ա  
Գալան.- Եր.: Էդիթ Պրինտ, 2023.- 144 էջ:

ՀՏԴ 821.133.1-93 Գալան

ԳՄԴ 84(4Ֆր)

Ֆրանսերենից թարգմանեց Անուշ Նիկողոսյանը

«Ալադինի պատմությունը կամ կախարդական լամպր» հեքիաթը մեկն է այն հրաշապատում հեքիաթներից, որ ընդգրկված է «Հազար ու մի գիշեր» ժողովածուում: Դերձակ Մուստաֆայի կամակոր որդի Ալադինը, որ օրերով թափառում էր փողոցներում, ոչ մի արհեստի չէր տիրապետում, բայց հենց նրան էր վիճակված գտնել կախարդական լամպն ու դիմակայել աֆրիկացի կախարդի չար ծրագրերին:

Գիրքը նախատեսված է դպրոցական միջին և բարձր դասարանների աշակերտների, ընթերցողների լայն լսարանի համար:

Թարգմանության հեղինակային իրավունքները պաշտպանված են: Գրքի օգտագործումը՝ արտատպումը կամ էլեկտրոնային հարթակներում մասնակի և ամբողջական տեղադրումը, աուդիո տարբերակով տարածումն առանց հրատարակչի թույլտվության, արգելված է ՀՀ օրենսդրությամբ:

ISBN 978-9939-75-968-5

© Էդիթ Պրինտ, 2023





**Չ**ինաստանի՝ թագավորություններից մեկի մայրաքաղաքում, որը շատ մեծ էր ու հարուստ, բայց որի անունը հիմա չեմ կարողանում հիշել, ապրում էր մի դերձակ՝ Մուստաֆա անունով: Նա օրվա ապրուստը վաստակում էր միայն իր արհեստով:

Դերձակ Մուստաֆան շատ աղքատ էր, վաստակածը հազիվ բավարարում էր, որ գոյատևեն ինքը, կինը և Աստծո պարգևած որդին:

Որդու՝ Ալադինի դաստիարակությանը մեծ ուշադրություն չէին դարձրել, ինչի պատճառով էլ նա արատավոր հակումներ ուներ: Չար էր, կամակոր, չէր հնազանդվում ո՛չ հորը, ո՛չ մորը: Երբ մի քիչ մեծացավ, ծնողներն անկարող եղան նրան տանը պահելու. առավոտ կանուխ դուրս էր գալիս և ամբողջ օրն անցկացնում փողոցներում ու մարդաշատ հրապարակներում՝ խաղալով իրենից էլ փոքր մանկահասակ թափառականների հետ:

<sup>1</sup> Հնում Չինաստան էին անվանում առհասարակ Հեռավոր Արևելքը՝ իր ընդհանուր մշակույթով ու հավատալիքներով:





Երբ այնքան մեծացավ, որ արդեն կարող էր արհեստ սովորել, հայրը նրան իր արհեստանոցը տարավ, քանի որ այլ արհեստ սովորեցնելու հնարավորություն չունեի, և սկսեց ցույց տալ՝ ինչպես պետք է աշխատել ասեղով, սակայն ո՛չ քաղցր խոսքը, ո՛չ ամեն տեսակի պատիժների սպառնալիքը չօգնեցին հորը կենտրոնացնելու որդու անկայուն միտքը. նա չկարողացավ ստիպել զավակին ջանասեր լինել և կապվել աշխատանքին, ինչպես ինքը կցանկանար: Հենց Մուստաֆան շրջվում էր, Ալադինը փախչում էր նրա մոտից և ամբողջ օրն այլևս չէր վերադառնում:

Հայրը պատժում էր նրան, սակայն Ալադինն անուղղելի էր, և մեծ ափսոսանքով Մուստաֆան ստիպված եղավ որդուն իր կամքին թողնել: Սակայն դա մեծ ցավ էր պատճառում հորը, և զավակին իր պարտականությունը սովորեցնել չկարողանալու վշտից նա մի անբուժելի հիվանդություն ձեռք բերեց ու շուտով մահացավ:

Ալադինի մայրը, տեսնելով, որ տղան հոր արհեստը սովորելու միտք չունի, փակեց արհեստանոցն ու վաճառեց գործիքները. այդ վաճառքից և բամբակ մանելուց ստացված գումարը պետք է օգներ իրեն և որդուն գոյատևելու:

Ալադինը, որին անգամ հոր հանդեպ ունեցած վախը հետ չէր պահում, կատարյալ ազատություն ստացավ. մոր խնամքը նրան ամենևին չէր մտահոգում, երբեմն նույնիսկ համարձակվում էր սպառնալ նրան, երբ վերջինս մի չնչին հանդիմանություն էր անում: Նա ավելի ու ավելի շատ ժամանակ էր անցկացնում իր հասակակից երեխաների հետ և նախկինից էլ մեծ կրքով էր տրվում խաղերին:

Այսպես շարունակվեց նրա կյանքը մինչև տասնհինգ տարեկալ+նը. տղայի միտքը երբեք ոչնչի վրա կանգ չառավ, երբեք չմտածեց, թե ինչ պիտի դառնա մի օր:

Մի օր՝ իր սովորության համաձայն հրապարակում թափառականների հետ



խաղալու միջոցին, այդտեղով անցնող մի անձանոթ մարդ կանգ առավ՝ նրան հետևելու:

Անձանոթը երևելի մի կախարդ էր (այս պատմությունն առաջինը գրողները նրան կոչում էին աֆրիկացի կախարդ, մենք էլ այդ անունը կտանք, հատկապես, որ նա իսկապես Աֆրիկայից էր, և երկու օր էր, ինչ ժամանել էր այդ երկիր):

Գուցե կախարդը, լավ հասկանալով մարդու արտաքին տեսքի նշանները, Ալադինի դեմքին նկատեց այն ամենը, ինչ անհրաժեշտ էր իր ծրագրի իրագործմանը, որի համար կատարել էր այդ ճամփորդությունը: Իսկ գուցե ճարպկորեն տեղեկություններ էր հավաքել նրա ընտանիքի և հակումների մասին:

Ինչևէ, երբ ամեն ինչ պարզ էր, նա մոտեցավ երիտասարդին և ընկերներից մի քանի քայլ հեռացնելով՝ ասաց.

